Ընդունվել է՝ 05/12/20
Բրոթման, Նաջարյան
Բոլորը՝ կողմ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-52

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ ԵՐԿԱՐԱՁԳՈՂ ՈՐՈՇՈՒՄ՝ ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ՝ COVID-19-Ի ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Հաշվի առնելով, որ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլուխը նախատեսում է, որ տեղական արտակարգ դրությունը կարող է հայտարարվել քաղաքային խորհրդի կողմից, և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով և չեղարկեց Կառավարության օրենսգրքի 8630 բաժնով սահմանված 60-օրյա ժամկետը, որի շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինները պետք է վերականգնեն տեղական արտակարգ դրությունը; և

Հաշվի առնելով, որ 2020 թ.-ի մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանը հայտարարեց տեղական արտակարգ իրավիճակ՝ կապված COVID-19-ի ներթափանցման հետևանքով աղետի վտանգի կամ անձանց և սեփականության անվտանգությանը սպառնացող ծայրահեղ վտանգի պատճառով; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի և թիվ 20-28 Որոշման՝ հայտարարեց տեղական արտակարգ դրություն; և

Հաշվի առնելով, որ Խորհուրդն ընդունել է թիվ 20-29, 20-33 և 20-41 Որոշումները, որոնք հրապարակել, վավերացրել կամ երկարաձգել են որոշակի հանրային կարգադրություններ, որոնք անհրաժեշտ են համարվել կյանքի, առողջության, անվտանգության կամ ունեցվածքի պահպանման համար; և

Հաշվի առնելով, որ քաղաքապետարանի ունակությունը՝ տեղական ռեսուրսները մոբիլիզացնել շարունակելու, միջգերատեսչական պատասխանը համակարգելու, կենսական պարագաների գնումները արագացնելու, փոխադարձ օգնության օգտագործումը, նահանգային և դաշնային կառավարությունների կողմից հետագա փոխհատուցում որոնելու ուղղությամբ շարունակում է վճռորոշ դեր

կատարել՝ COVID-19-ին հաջողությամբ արձագանքելու համար, և այդ հայտարարված հրահանգները պահանջում են փոփոխություններ կատարել՝ փոփոխվող հանգամանքների պատճառով, ինչպես նաև՝ COVID-19 համավարակին արձագանքել շարունակելու համար արտակարգ դրության երկարացման անհրաժեշտությունից ելնելով;

ՀԵՏԵՎԱԲԱՐ, ԱՅԺՄ Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհուրդը հայտարարում է, որ ըստ Գլենդելի քաղաքային օրենսգրքի 2.84-րդ գլխի՝ 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգվում է, և Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը ձեռնարկելու է Գլենդել քաղաքում կյանքի, առողջության և անվտանգության պաշտպանության համար անհրաժեշտ քայլերը, և սույնով որոշվում է հետևյալը.

ԲԱԺԻՆ 1. Սույնով հայտարարվում և կարգադրվում է, որ տեղական արտակարգ դրությունը նախատեսվում է գոյություն ունենալ այնքան ժամանակ, քանի դեռ դրա դադարեցման մասին չի հայտարարվել Կալիֆորնիայի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից:

ԲԱԺԻՆ 2. Սույնով հայտարարվում և կարգադրվում է, որ նշված տեղական արտակարգ դրության առկայության ընթացքում Քաղաքի արտակարգ իրավիճակների կազմակերպության լիազորությունները, գործառույթները և պարտականությունները պետք է լինեն նահանգային օրենքով, սույն Քաղաքապետարանի կանոնադրությամբ, կարգադրություններով և որոշումներով սահմանված կարգով և Գլենդելի Քաղաքային խորհրդի կողմից հաստատված արտակարգ իրավիճակների ծրագրի համաձայն;

ԲԱԺԻՆ 3. Սույնով հայտարարվում և կարգադրվում է, որ այս պաշտոնական հայտարարության պատճենն ուղարկվի Լոս Անջելեսի վարչաշրջանի Արտակարգ իրավիճակների կառավարման գրասենյակ և վերահասցեավորվի Կալիֆորնիայի նահանգապետի Արտակարգ ծառայությունների ծառայության տնօրենին՝ խնդրելով, որ տնօրենը ընդունելի համարի, որ ըստ նահանգային օրենքի՝ Կալիֆորնիայի նահանգապետը, Արտակարգ իրավիճակների մասին օրենքի համաձայն, հայտարարություն է հրապարակում՝ Լոս Անջելեսի վարչաշրջանի Գլենդել քաղաքում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին; որ նահանգապետը հրաժարվում է այնպիսի կանոնակարգերից, որոնք կարող են խոչընդոտել արձագանքման և վերականգնման ջանքերին; որ վերականգնման աջակցությունը հասանելի դառնա Կալիֆորնիայի աղետների աջակցության մասին օրենքի համաձայն; և որ նահանգը արագացնի նահանգային և դաշնային ռեսուրսների և ցանկացած այլ համապատասխան դաշնային աղետներից փրկելու ծրագրերի հասանելիությունը:

ԲԱԺԻՆ 4. Գլենդել քաղաքը կհետևի Լոս Անջելեսի վարչաշրջանի՝ տանը մնալու հրամանին և կսկսի սահմանափակումների դանդաղ և աստիճանական փոփոխությունների գործընթացը՝ միաժամանակ ապահովելով անվտանգության համապատասխան միջոցների առկայությունը: Լոս Անջելեսի վարչաշրջանի կարգադրության մեջ նշվում է, որ Լոս Անջելեսի շրջանի բոլոր բնակիչները պետք է տանը մնան, բացի էական նշանակության աշխատանքի կամ գործողությունների համար, ինչպիսիք են՝ մթերային գնումներ կատարելը կամ բժշկին այցելելը: Սահմանափակումների վերացումից հետո քաղաքապետարանի պաշտոնյաները շարունակում են հորդորել Գլենդելի բնակիչներին և բիզնեսներին ձեռնարկել ծայրահեղ նախազգուշական միջոցներ՝ կիրառելով Վարչաշրջանի հանրային

առողջության վարչության կողմից առաջարկվող գործելակերպերը: Որոշակի հանգամանքների դեպքում՝ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը կամ քաղաքային խորհուրդը կարող են ավելի խիստ միջոցներ նախաձեռնել՝ COVID-19-ի տարածման դեմ պայքարում, և այդ առավել խիստ դրույթները կփոխարինեն Լոս Անջելեսի վարչաշրջանի ցանկացած ավելի մեղմ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից սույն թվականի մայիսի 12-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Vrej Agajanian

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունված է՝

APPROVED AS TO FORM
PRINCIPAL ASSISTANT CITY ATTORNEY
DATE May 13, 2020

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ
ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-52 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի մայիսի 12-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան

Դեմ՝ Ոչ մեկը

Բացակա՝ Ոչ մեկը

Ձեռնպահ՝ Ոչ մեկը

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունվել է՝
05/12/20
Բրոթման, Քասախյան
Դեմ՝ Դիվայն, Նաջարյան

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-53

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ COVID- 19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՎՏԱՐՄԱՆ ԴԵՄ ԱՐԳԵԼՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 18-ին Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի կողմից տրվել է թիվ 3 հանրային կարգադրությունը, որով սահմանվել է մորատորիում՝ արգելելով վտարել ցանկացած բնակելի և առևտրային տարածքների վարձակալներին, որոնք չեն կարողանում վճարել վարձավճարը՝ COVID-19-ի հետ կապված պատճառով, և այս հրամանը 2020 թ. մարտի 24-ին

փոփոխվեց, վավերացվեց և երկարաձգվեց Քաղաքային խորհրդի կողմից և վտարման մորատորիումի վերաբերյալ ավելացվեց 14-օրյա գրավոր ծանուցումը; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 27-ին Նահանգապետը հրապարակեց N-37-20 գործադիր հրամանը, որով երկարացվեց բնակելի տարածքների վարձակալի վտարման վերաբերյալ բողոքին պատասխանելու ժամանակը, եթե վարձակալը գրավոր տեղեկացնում է տանտիրոջը, որ ի վիճակի չէ վճարել վարձավճարը COVID-19-ի պատճառով՝ վարձավճարի վճարման օրվանից առաջ կամ ոչ ուշ, քան դրանից յոթ օր անց: Ըստ Նահանգապետի հրամանի՝ վարձակալը պարտավոր է տանտիրոջը տրամադրել COVID-19-ի հետ կապված պատճառաբանությամբ փաստաթղթերը միայն ժամկետանց վարձավճարի վճարման ժամանակ, որն իրավական ուժով փոխարինում է Քաղաքապետարանի 14-օրյա գրավոր ծանուցման պահանջին, և

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 6-ին Կալիֆորնիայի դատական խորհուրդը՝ նահանգային դատարանների վարչական լիազոր մարմինը, հրապարակեց արտակարգ հրաման, որով արգելում է վտարման գործողությունների համար դատական ծանուցագրի ներկայացումը՝ նահանգապետի կողմից COVID-19 համավարակի հետ կապված արտակարգ դրության վերացումից հետո մինչև 90 օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքի, երբ վտարումն անհրաժեշտ է առողջության և անվտանգության համար, ինչպես նաև, առնվազն 60 օրվա ընթացքում, եթե շարունակվում է նախկինում գոյություն ունեցող դեպքերի գործողությունը; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 8-ին, Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը թողարկել է թիվ 6 հանրային հրամանը, որը փոփոխել է վտարման մորատորիումի հրամանները ՝ դրանք ենթակա դարձնելով նահանգապետի գործադիր հրամանին՝ բնակելի տարածքներից վտարումների վերաբերյալ, և Կալիֆորնիայի դատական խորհրդի հրամանին՝ հետաձգելով վտարման գործընթացները և նաև արգելելով տանտերերին գանձել կամ պահանջել ուշացած վճարման տույժեր, տուգանքներ կամ չվճարված վարձավճարների տոկոսներ կամ փորձել որևէ հետապնդող գործողություն կատարել հետաձգված վարձավճարները ստանալու համար; **և**

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 14-ին Քաղաքային խորհուրդը թիվ 20-41 որոշմամբ վավերացրեց և երկարաձգեց թիվ 6 հանրային հրամանի գործողության ժամկետը՝ երկարաձգելով վտարման մորատորիումի հետվճարման ժամկետը 6 ամսից մինչև 12 ամիս և երկարաձգեց վտարման մորատորիումի հանրային հրամանի գործողության ժամկետը մինչև 2020 թ. մայիսի 31-ը:

Հաշվի առնելով, որ վտանգի նման պայմանները շարունակում են գոյություն ունենալ, և անհրաժեշտ են դարձնում նախնական որոշումների և հասարակական հրամանների ժամկետների երկարաձգելը և լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկումը՝ հանրային առողջության և անվտանգության պահպանման համար:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ

ԲԱԺԻՆ 1. Թիվ 20-41 որոշումը (բաժին 1, ենթաբաժին Բ), որը վերաբերում է բնակելի տարածքներից վտարման արգելքի մասին արտակարգ իրավիճակների հանրային հրամանին, սույնով ընդլայնվում է հետևյալ կերպ.

> Վտարման արգելք (մորատորիում) բնակելի տների վարձակալության վերաբերյալ: Այս աննախադեպ արտակարգ

դրության պայմաններում Գլենդելի բնակիչներին օգնություն և պաշտպանություն ապահովելու համար բնակելի վարձակալությունների վտարման արգելքի գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև 2020 թվականի հունիսի 30-ը, և պետք է համապատասխանի թիվ 20-41 որոշմանը, բացառությամբ հետևյալ փոփոխության.

A. Բնակելի տների վարձակալների կողմից ժամկետանց ցանկացած վարձավճարի հետվճարման ժամկետը պետք է լինի սույն հրամանի ավարտից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում:

B. Հետվճարման ժամանակահատվածի սկզբից սկսած մինչև սույն մորատորիումի ավարտից հետո տասներկու ամսվա ժամանակահատվածի ավարտը՝ տանտերը և վարձակալը պետք է սահմանեն չվճարված վարձավճարների համամասնորեն վճարման գրաֆիկը, որը կազմում է հետաձգված վարձավճարի գումարի առնվազն 25%-ը, որը պետք է վճարվի յուրաքանչյուր եռամսյակի վերջում: Եթե հետվճարման ժամանակահատվածում վարձակալը դադարեցնում է վարձակալությունը, ապա հետաձգված վարձավճարների ընդհանուր գումարը անմիջապես դառնում է վճարման ենթակա:

C. Չնայած վերը նշված ենթակետ Բ-ին, տանտերը և վարձակալը կարող են համաձայնության գալ հետվճարման այլ պայմանների շուրջ:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ ճանաչվում է անվավեր համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի:

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից սույն թվականի մայիսի 12-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունված է՝

APPROVED AS TO FORM
PRINCIPAL ASSISTANT CITY ATTORNEY
DATE May 13, 2020

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-53 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի մայիսի 12-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Քասախյան, Աղաջանյան

Դեմ՝ Դիվայն, Նաջարյան

Բացակա՝ Ոչ մեկը

Ձեռնպահ՝ Ոչ մեկը

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունվել է՝
05/12/20
Քասախյան/Բրոթման
Դեմ՝ Նաջարյան

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-54

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ COVID- 19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՎՏԱՐՄԱՆ ԴԵՄ ԱՐԳԵԼՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 18-ին Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի կողմից տրվել է թիվ 3 հանրային կարգադրությունը, որով սահմանվել է մորատորիում՝ արգելելով վտարել ցանկացած բնակելի և առևտրային

տարածքների վարձակալներին, որոնք չեն կարողանում վճարել վարձավճարը՝ COVID-19-ի հետ կապված պատճառով, և այս հրամանը 2020 թ. մարտի 24-ին փոփոխվեց, վավերացվեց և երկարաձգվեց Քաղաքային խորհրդի կողմից և վտարման մորատորիումի վերաբերյալ ավելացվեց 14-օրյա գրավոր ծանուցումը; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 27-ին Նահանգապետը հրապարակեց N-37-20 գործադիր հրամանը, որով երկարացվեց բնակելի տարածքների վարձակալի վտարման վերաբերյալ բողոքին պատասխանելու ժամանակը, եթե վարձակալը գրավոր տեղեկացնում է տանտիրոջը վարձավճարի վճարման օրվանից առաջ կամ ոչ ուշ, քան դրանից յոթ օր անց, որ ի վիճակի չէ վճարել վարձավճարը՝ COVID-19-ի պատճառով: Ըստ Նահանգապետի հրամանի՝ վարձակալը պարտավոր է տանտիրոջը տրամադրել COVID-19-ի հետ կապված պատճառաբանությամբ փաստաթղթերը միայն ժամկետանց վարձավճարի վճարման ժամանակ, որն իրավական ուժով փոխարինում է Քաղաքապետարանի 14-օրյա գրավոր ծանուցման պահանջին, և

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 6-ին Կալիֆորնիայի դատական խորհուրդը՝ նահանգային դատարանների վարչական լիազոր մարմինը, հրապարակեց արտակարգ հրաման, որով արգելում է վտարման գործողությունների համար դատական ծանուցագրի ներկայացումը՝ նահանգապետի կողմից COVID-19 համավարակի հետ կապված արտակարգ դրության վերացումից հետո մինչև 90 օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքի, երբ վտարումը անհրաժեշտ է առողջության և անվտանգության համար, ինչպես նաև, առնվազն 60 օրվա ընթացքում, եթե շարունակվում է նախկինում գոյություն ունեցող դեպքերի գործողությունը; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 8-ին, Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը թողարկել է թիվ 6 հանրային հրամանը, որը փոփոխել է վտարման մորատորիումի հրամանները՝ դրանք ենթակա դարձնելով նահանգապետի գործադիր հրամանին՝ բնակելի տարածքներից վտարումների վերաբերյալ, և Կալիֆորնիայի դատական խորհրդի հրամանին՝ հետաձգելով վտարման գործընթացները և նաև արգելելով տանտերերին գանձել կամ պահանջել ուշացած վճարման տույժեր, տուգանքներ կամ չվճարված վարձավճարների տոկոսներ կամ փորձել որևէ հետապնդող գործողություն կատարել հետաձգված վարձավճարները ստանալու համար; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 14-ին Քաղաքային խորհուրդը թիվ 20-41 որոշմամբ վավերացրեց և ընդլայնեց թիվ 6 հանրային հրամանը՝ երկարաձգելով վտարման մորատորիումի հետվճարման ժամկետը 6 ամսից մինչև 12 ամիս և երկարաձգեց վտարման մորատորիումի հանրային հրամանի գործողության ժամկետը մինչև 2020 թ. մայիսի 31-ը:

Հաշվի առնելով, որ վտանգի նման պայմանները շարունակում են գոյություն ունենալ, և անհրաժեշտ են դարձնում նախնական որոշումների և հասարակական հրամանների ժամկետների երկարաձգելը և լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկումը՝ հանրային առողջության և անվտանգության պահպանման համար:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ՝

ԲԱԺԻՆ 1. Թիվ 20-41 որոշումը (բաժին 1, ենթաբաժին Բ), որը վերաբերում է առևտրային տարածքներից վտարման արգելքի մասին արտակարգ իրավիճակների հասարակական հրամանին, սույնով ընդլայնվում է հետևյալ կերպ.

> Վտարման արգելք (մորատորիում) առևտրային տարածքների վարձակալության վերաբերյալ: Այս աննախադեպ արտակարգ դրության պայմաններում Գլենդելի կոմերցիոն վարձակալներին և բիզնեսներին օգնություն և պաշտպանություն ապահովելու համար առևտրային տարածքների վարձակալությունների վտարման արգելքի գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև 2020 թվականի հունիսի 3-ը, և պետք է համապատասխանի թիվ 20-41 որոշմանը, բացառությամբ հետևյալ փոփոխության.
>
> 1. Վարձավճարի վճարման օրվանից տասնչորս օր առաջ վարձակալը գրավոր ծանուցում է տարածքի տիրոջը այն մասին, որ COVID-19-ի պատճառով ամբողջ գումարը վճարել չկարողանալու պատճառով պետք է հետաձգի վարձավճարների ամբողջ կամ որոշ չափով վճարումը;
> 2. Առևտրային տարածքների վարձակալների կողմից ժամկետանց ցանկացած վարձավճարի հետվճարման ժամկետը պետք է լինի սույն հրամանի ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում:
> 3. Առևտրային տարածքներից վտարման մորատորիումը փոփոխելու և ընդլայնելու մասին սույն որոշման օրվանից սկսած՝ սույն հրամանը չի տարածվում հանրային առևտրային ընկերություն հանդիսացող վարձակալի կողմից վարձակալված որևէ առևտրային տարածքի վրա:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի:

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով,

որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից սույն թվականի մայիսի 12-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Vrej Agajanian

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունված է՝

APPROVED AS TO FORM
PRINCIPAL ASSISTANT CITY ATTORNEY
DATE May 13 2020

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-54 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի մայիսի 12-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Դիվայն, Քասախյան, Աղաջանյան

Դեմ՝ Նաջարյան

Բացակա՝ Ոչ մեկը

Ձեռնպահ՝ Ոչ մեկը

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունվել է՝
05/12/20
Նաջարյան/Դիվայն
Դեմ՝ Բրոթման

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-55

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ COVID- 19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ ԿՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ; ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ վտանգի նման պայմանները շարունակում են գոյություն ունենալ, և անհրաժեշտ են դարձնում նախնական որոշումների և հասարակական հրամանների ժամկետների երկարաձգելը և լրացուցիչ պաշտպանության միջոցների

ձեռնարկումը՝ հանրային առողջության և անվտանգության պահպանման համար:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ՝

ԲԱԺԻՆ 1. Թիվ 20-41 որոշումը, որը վերաբերում է դեմքի պաշտպանիչ միջոցներ կրելու մասին արտակարգ իրավիճակների հանրային հրամանին, սույնով երկարաձգվում է մինչև 2020 թ. հունիսի 3-ը, և այսուհետ հաստատվում է հետևյալը.

A. Բոլոր անձինք, ներառյալ էական նշանակության ոլորտների աշխատողները, ինչպես սահմանված է Լոս Անջելեսի վարչաշրջանի «Տանն ավելի ապահով է» հանրային առողջության վարչության կողմից, որը վերանայվել է 2020 թվականի ապրիլի 10-ին կամ, ինչպես հետագայում կարող է վերանայվել, («Վարչաշրջանի հանրային առողջության հրամանը«), պետք է կրեն դեմքի պաշտպանիչ միջոցներ, ինչպիսիք են՝ շարֆերը (խիտ գործվածքներ, առանց անցքերի), բանդանաները, պարանոցի փաթաթանները կամ այլ կտորե դիմակներ, երբ նրանք լքում են իրենց բնակության վայրը, աշխատանքի վայրը կամ այլ կերպ գտնվում են հանրության մեջ՝ այնպիսի հիմնական գործողությունների համար, ինչպես օրինակ՝ իրենց թաղամասում քայլելու, դեպի կարևոր նշանակության բիզնեսի վայր քայլելու կամ այդտեղից վերադառնալու կամ հանրային տրանսպորտից օգտվելու համար. այնուամենայնիվ, անձնական տրանսպորտային միջոցով միայնակ կամ միևնույն ընտանիքի անդամների հետ ճանապարհորդող վարորդներից չի պահանջվում դեմքի պաշտպանիչ միջոց կրելը, եթե նրանք որևէ պատճառով չեն իջեցնում մեքենայի պատուհանները, օրինակ՝ արագ արձագանքման աշխատակիցների, սննդի ծառայության աշխատակիցների կամ իրենց տան անդամներից բացի այլ անձանց հետ հետ հաղորդակցվելու նպատակով: Մինչև 2 տարեկան երեխաները (ներառյալ նորածինները) չպետք է կրեն դեմքը ծածկող միջոցներ: 2-ից 8 տարեկան երեխաները պետք է կրեն դրանք, սակայն գտնվեն մեծահասակների հսկողության ներքո, որպեսզի համոզվեն, որ երեխան կարող է անվտանգ շնչել և խուսափել խեղդվելուց կամ շնչահեղձ լինելուց: Շնչառական խնդիրներ ունեցող երեխաները չպետք է կրեն դեմքը ծածկող միջոցներ:

B. Բոլորի առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու նպատակով՝ ի պատասխան COVID-19- ի բռնկման, բոլոր այն աշխատողները, ովքեր աշխատում են բիզնեսներում կամ ստորև նշված ծառայությունների ոլորտում, պետք է իրենց աշխատանքն իրականացնելիս կրեն քիթը և բերանը ծածկող միջոցներ:

1. Մթերային խանութներ, սերտիֆիկացված ֆերմերների շուկաներ, ֆերմաների և մթերքների կրպակներ, սուպերմարկետներ, սննդի բանկեր, մինիմարկետներ, մեծածախ խանութներ, այլ հաստատություններ, որոնք մանրածախ վաճառում են պահածոյացված ուտելիք, սպառողական ապրանքներ, թարմ միրգ և բանջարեղեն,

ընտանի կենդանիների սնունդ, ջուր, թարմ միս, ձուկ եւ թռչնամիս, և ցանկացած այլ կենցաղային ապրանքներ, ինչպիսիք են մաքրման կամ անձնական խնամքի ապրանքները: Սա ներառում է խանութները, որոնք վաճառում են մթերք և այլ ոչ մթերային ապրանքներ և ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բնակիչների անվտանգությունը, սանիտարական ծառայությունները և կենսական աշխատանքները շարունակելու համար;

2. Կազմակերպություններ և բիզնեսներ, որոնք տրամադրում են ուտելիք, կացարան, այլ սոցիալական ծառայություններ և կենսական անհրաժեշտության այլ ծառայություններ սոցիալապես անապահով կամ այլ կարիք ունեցող անձանց (ներառյալ՝ հանցախմբերին անդամակցելու կանխարգելումն ու միջամտումը, ընտանեկան բռնությունը և անօթևանների ծառայության գործակալությունները);

3. Բենզալցակայաններ, ավտոմեքենայի պարագաների խանութներ, ավտոմեքենայի վերանորոգման շարժական ծառայություններ, ավտոմեքենայի վերանորոգման խանութներ (ներառյալ, առանց սահմանափակումների, մանրածախ կամ օգտագործած մեքենաների սրահներին կից կամ դրանց առնչվող վերանորոգման խանութները), և հեծանիվի վերանորոգման ու դրան առնչվող;

4. Բանկեր, վարկային միություններ, ֆինանսական հաստատություններ և ապահովագրության ընկերություններ;

5. Տնտեսական խանութներ, տնկարաններ, շինանյութի մատակարարման խանութներ;

6. Փականագործներ, էլեկտրիկներ, վտանգավոր իրեր ոչնչացնողներ, պահակակետերի աշխատողներ, տնային վարպետական ծառայություններ, հուղարկավորության սրահների աշխատողներ, տեղափոխման ծառայություններ, ջեռուցման, օդափոխման համակարգեր և օդորակիչներ տեղադրողներ, ատաղձագործներ, բուսականության ծառայություններ, ծառերի խնամք, լանդշաֆտի մասնագետներ, այգեպաններ, շենքերի կառավարիչներ, անձնական անվտանգության ծառայություններ և այլ ծառայություն մատուցողներ, ովքեր ծառայություններ են ապահովում շենքերի/տարածքների և Վարչաշրջանի հանրային առողջության հրամանով սահմանված այլ կենսական բիզնեսների անվտանգությունը, սանիտարական ծառայությունները և անհրաժեշտ աշխատանքները շարունակելու համար;

7. Փոստային և առաքման ծառայություններ մատուցող բիզնեսներ՝ ներառյալ փոստարկղերը;

8. Կրթական հաստատություններ (ներառյալ հանրային և մասնավոր K-12 դպրոցները, քոլեջներն ու համալսարանները), որոնք հեռավար դասընթացներ են վարում, սնունդը վերցնելու ծառայություն են տրամադրում կամ անհրաժեշտ գործունեություն ծավալում՝ պահպանելով սոցիալական հեռավորություն;

9. Լվացքատներ, քիմմաքրման կետեր, լվացքի ծառայություն մատուցողներ;

10. Ռեստորաններ և սննդի այլ հաստատություններ, որոնք սնունդ են պատրաստում և մատուցում, բայց միայն առաքման, մեքենայից պատվիրելու (drive thru) և տուն տանելու նպատակով: Ներսում կամ դրսում սեղանների շուրջ ուտելն արգելված է: Սրճարանները, սննդի այլ կետերը և ռեստորանները, որոնք գտնվում են հիվանդանոցներում, բուժխնամքի տներում կամ լիցենզավորված այլ առողջապահական խնամքի հաստատություններում, կարող են սեղանի շուրջ ուտելու ծառայություններ մատուցել՝ շարունակելով պահպանել Վարչաշրջանի հանրային առողջության հրամանի Բաժին 2-ի (a)-(d) կետերով սահմանված սոցիալական հեռավորության պահանջը;

11. Բիզնեսներ, որոնք տնից աշխատող անձանց համար անհրաժեշտ գրասենյակային պիտույքներ կամ համակարգչային ծառայություններ են մատուցում;

12. Բիզնեսներ, որոնք այլ կենսական բիզնեսների գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ օժանդակություն և պարագաներ են տրամադրում;

13. Ոչ արտադրական, փոխադրման կամ իրացման բիզնեսներ, որոնք մթերք, սնունդ, իրեր են առաքում կամ ծառայություններ են մատուցում անմիջապես բնակիչներին, կենսական բիզնեսներին, առողջապահական ծառայություններին և կենսական ենթակառուցվածքներին՝ նավով, բեռնատարով կամ տրանսպորտով, կամ լոգիստիկ օգնություն են տրամադրում;

14. Ավիաընկերություններ, տաքսիներ, ճանապարհը կիսող ծառայություններ և այլ մասնավոր փոխադրամիջոցներ տրամադրողներ, որոնք առօրյա կյանքին անհրաժեշտ գործունեության և այս հրամանով բացահայտորեն լիազորված այլ նպատակների համար փոխադրամիջոցներ են տրամադրում;

15. Տնային խնամք տարեցների, չափահասների, հաշմանդամություն ունեցող անձանց կամ երեխաների համար;

16. Բնակության հաստատություններ ու ապաստարաններ,

որոնք ծառայում են անտուն քաղաքացիներին, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին, չափահասներին, երեխաներին և կենդանիներին;

17. Մասնագիտական ծառայություններ, ինչպիսիք են՝ իրավական, աշխատավարձային կամ հաշվապահական ծառայությունները, որոնք օժանդակում են օրենքով սահմանված գործունեություններին, և անշարժ գույքի սեփականության թույլտվությունների, ստուգումների, շինարարական աշխատանքների, փոխանցման և գրանցման ծառայություններ՝ ներառյալ բնակելի և առևտրային անշարժ գույքը և դրան առնչվող այլ ծառայությունները;

18. Երեխաների խնամքի հաստատություններ, որոնք ծառայություններ են մատուցում Լոս Անջելեսի վարչաշրջանի հրամանով բացառված աշխատողներին, ովքեր աշխատում են Լոս Անջելեսի վարչաշրջանի հրամանի պայմաններով;

19. Հյուրանոցներ, մոթելներ, վարձով տրվող միավորներ և նմանատիպ ծառայությունների հաստատություններ;

20. Շինարարության աշխատողներ, ովքեր օժանդակում են շինհրապարակների և շինարարական ծրագրերի (ներառյալ բնակարանային շինարարությունը) շինարարությանը, գործունեությանը, ստուգումներին և պահպանմանը:

A. Այս պահին դեմքի պաշտպանիչ միջոցները պարտադիր չէ, որ լինեն բժշկական կամ N95 տեսակի ռեսպիրատորներ, այլ կարող են լինել կտորե հարմարանքներ, ինչպես օրինակ՝ շարֆերը և բանդանաները: Բոլոր այն աշխատողները, որոնք պետք է կրեն դեմքի պաշտպանիչ միջոցներ, պետք է հաճախակի (օրական առնվազն մեկ անգամ) լվանան կրկին օգտագործման ենթակա այս հարմարանքները՝ իրենց և մյուսների առողջության և անվտանգության համար: Մեկանգամյա օգտագործման դեմքի պաշտպանիչ միջոցները պետք է պատշաճ կերպով նետել աղբարկղերի մեջ: Հանրային անվտանգության շտապ արձագանքման անձնակազմը պետք է կրի դեմքի պաշտպանիչ հարմարանքներ՝ համաձայն Հիվանդությունների վերահսկման կենտրոնի ուղեցույցերի և ինչպես նախատեսված է Գլենդել քաղաքի գերատեսչական քաղաքականություններով:

B. Բոլոր վերը նկարագրված ոլորտներում աշխատող կամ ծառայություն մատուցող աշատակիցների գործատուները պետք է թույլ տան, որ իրենց աշխատակիցներն առնվազն յուրաքանչյուր 30 րոպեն մեկ ձեռքերը լվանան: Բոլոր այս գործատուները պետք է իրենց հաշվին աշխատողների համար ապահովեն ոչ բժշկական դիմակներ: Բոլոր այս գործատուները պետք է ապահովեն, որ իրենց աշխատակիցները կարողանան օգտվել մաքուր, սանիտարական սանհանգույցներից, որոնք գործատուի հաշվին ապահովված են բոլոր անհրաժեշտ մաքրող կամ ախտահանող միջոցներով, որն անհրաժեշտ է Լոս Անջելեսի վարչաշրջանի հանրային առողջության

վարչության կողմից առաջարկված ձեռքի ախտահանման ընթացակարգերին հետևելու համար: Բոլոր այս գործատուները պետք է հաճախորդների, այցելուների և աշխատակիցների համար կիրառեն սոցիալական հեռավորության պահպանման միջոցառումներ՝ հնարավորության դեպքում յուրաքանչյուր անձի միջև ապահովելով վեց ոտնաչափ հեռավորություն: Վերը նկարագրված բիզնեսների և կազմակերպությունների բոլոր հաճախորդները և այցելուները պետք է կրեն քիթը և բերանը ծածկող պաշտպանիչ միջոցներ՝ աշխատողների և հաճախորդների համար լրացուցիչ պաշտպանություն ապահովելու համար: Այս պահին դեմքի պաշտպանիչ միջոցները պարտադիր չէ, որ լինեն բժշկական կամ N95 տեսակի ռեսպիրատորներ, այլ կարող են լինել կտորե հարմարանքներ, ինչպես օրինակ՝ շարֆերը և բանդանաները: Այս Հանրային հրամանի Բաժին Բ-ում նկարագրված բիզնեսի սեփականատերը կամ աշխատակիցը կարող է հրաժարվել ընդունել կամ ծառայություն մատուցել ցանկացած անձի, ով չի կրում դեմքը ծածկող պաշտպանիչ միջոց՝ ըստ այս Հրամանով նախատեսված կարգով: Բացի այդ, Բաժին Բ-ում նկարագրված բոլոր մանրածախ բիզնեսներին խրախուսվում է տեղադրել պլեքսիգլաս ապակիներ՝ վաճառքի բոլոր կետերում գանձապահներին և հաճախորդներին առանձնացնելու նպատակով: Սրանք առաջարկություններ են, ոչ թե՝ պահանջներ:

C. Կորոնավիրուսից և COVID-19-ից պաշտպանվելու համար խաղաղապահ ոստիկանները կարող են օրինական կալանավորված անձանցից պահանջել դեմքը ծածկող հարմարանքներ կրել: Եթե անձը դեմքը ծածկող հարմարանք չունի, դրանք կտրամադրվեն ոստիկանների կողմից:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի:

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդել քաղաքի խորհրդի կողմից սույն թվականի մայիսի 12-

ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունված է՝

APPROVED AS TO FORM
PRINCIPAL ASSISTANT CITY ATTORNEY
DATE May 13, 2020

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-55 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի մայիսի 12-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան

Դեմ՝ Բրոթման

Բացակա՝ Ոչ մեկը

Ձեռնպահ՝ Ոչ մեկը

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունվել է՝
05/12/20
Դիվայն/Բրոթման
Բոլորը՝ կողմ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-56

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ COVID- 19-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ; ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 24-ին Քաղաքային խորհուրդը թիվ 20-33 որոշմամբ երկարաձգեց նախորդ կարգադրությունները մինչև 2020 թ. ապրիլի

30-ը, և ըստ Կոստա-Հոքինսի՝ վարձակալությամբ տրվող տների մասին օրենքի՝ վարձավճարի բարձրացման սառեցումից չազատված ցանկացած վարձակալական միավորի (նախքան 1995 թ. փետրվարի 1-ը կառուցված միավորներ, առանձնատներ և անհատական համատիրության շենքեր) վրա սահմանեց վարձավճարի բարձրացման սառեցում; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 25-ին Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը հրապարակեց թիվ 5 հանրային հրամանը, որով նախատեսում է, որ վարձավճարի բարձրացման սառեցման հրամանը կիրառվի վարձավճարների բարձրացումը կանգնեցնելու համար, անկախ այն բանից, թե նախկինում երբ է ներկայացվել վարձավճարի բարձրացման ծանուցումը, և որ յուրաքանչյուր տանտեր, ով ցանկանում է բարձրացնել վարձավճարը պետք է այդ մասին նոր ծանուցում ներկայացնի՝ այս հրամանի գործողության ժամկետի ավարտից հետո;

Հաշվի առնելով, որ 2020 թվականի ապրիլի 14-ին Քաղաքային խորհուրդը թիվ 20-41 որոշմամբ վավերացրեց վարձավճարի բարձրացման սառեցման վերաբերյալ թիվ 5 հրամանը և երկարաձգեց բոլոր հանրային հրամանները մինչև 2020 թվականի մայիսի 15-ը, բացառությամբ վտարման մորատորիումի, որն ուժի մեջ է, մինչև 2020 թվականի մայիս 31-ը; և

Հաշվի առնելով, որ վտանգի նման պայմանները շարունակում են գոյություն ունենալ, և անհրաժեշտ են դարձնում նախնական որոշումների և հանրային հրամանների ժամկետների երկարաձգելը և լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկումը՝ հանրային առողջության և անվտանգության պահպանման համար:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ

ԲԱԺԻՆ 1. Թիվ 20-33 և 20-41 որոշումները, որոնք վերաբերում են արտակարգ դրության հանրային հրամաններին՝ վարձավճարների բարձրացման և որոշակի վարձակալության արգելքի դադարեցման վերաբերյալ, սույնով երկարաձգվում են մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:

A. Վարձավճարի բարձրացում բնակելի անշարժ գույքի համար: Այս աննախադեպ արտակարգ իրավիճակի ժամանակ Գլենդելի բնակիչներին օգնություն և պաշտպանություն ապահովելու համար, ինչպես նախատեսված է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից թիվ 20-41 որոշմամբ ընդունմամբ, տրվել է վարձի բարձրացման սառեցում, որն ուժի մեջ է մտել 2020 թվականի մարտի 24-ից՝ անկախ այն հանգամանքից, թե վարձի բարձրացման ծանուցումը երբ է ներկայացվել, որով բնակելի վարձակալների բոլոր վարձերը նույնը կմնան, ինչ որ եղել են 2020 թվականի մարտի 24-ին և տեղական արտակարգ իրավիճակի ընթացքում: Արտակարգ իրավիճակի ավարտից հետո վարձերը բարձրացնել ցանկացող տանտերերը՝ նահանգային օրենքին համապատասխան, կարող են վարձի բարձրացման նոր ծանուցում տրամադրել, որտեղ հստակ նշվում է վարձերի բարձրացման նոր սկիզբը և բարձրացման գումարը: Վարձի սառեցումը վերաբերում է Գլենդել քաղաքի բոլոր բնակելի տարածքներին՝ բացառությամբ 1995թ. փետրվարի 1-ից հետո կառուցված բնակելի շենքերի, անհատական կոնդոմինիումների և առանձնատների: Այն նաև վերաբերում է բնակության երկրորդական վայրերին և երկարաժամկետ

վարձակալած հյուրանոցային համարներին:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդել քաղաքի խորհրդի կողմից սույն թվականի մայիսի 12-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունված է՝

APPROVED AS TO FORM
PRINCIPAL ASSISTANT CITY ATTORNEY
DATE May 13 2020

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-56 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի մայիսի 12-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան

Դեմ՝ Ոչ մեկը

Բացակա՝ Ոչ մեկը

Ձեռնպահ՝ Ոչ մեկը

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունվել է՝
05/12/20
Բրոթման/Նաջարյան
Բոլորը՝ կողմ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-57

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ COVID- 19-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ՔԱՂԱՔԻ ՈՐՈՇ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ; ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19-ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 18-ին Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը թողարկել է թիվ 4 հանրային հրամանը՝ քաղաքապետարանի տնօրինության տակ գտնվող բոլոր զբոսայգիներում և հանգստի գոտիներում բոլոր

արահետները, մարզադաշտերը/խաղադաշտերը, դաշտերը և սարքավորումները փակելու համար; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի ապրիլի 14-ին Քաղաքային խորհուրդը թիվ 20-41 որոշմամբ երկարաձգեց բոլոր հանրային հրամանները մինչև 2020 թվականի մայիսի 15-ը, բացառությամբ՝ վտարման մորատորիումի, որն ուժի մեջ է մինչև 2020 թվականի մայիսի 31-ը; և

Հաշվի առնելով, որ վտանգի նման պայմանները շարունակում են գոյություն ունենալ, և անհրաժեշտ են դարձնում նախնական որոշումների և հանրային հրամանների ժամկետների երկարաձգելը և լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկումը՝ հանրային առողջության և անվտանգության պահպանման համար:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ

ԲԱԺԻՆ 1. Թիվ 20-33 և 20-41 որոշումները, որոնք վերաբերում են արտակարգ դրության հանրային հրամաններին՝ բոլոր քաղաքային զբոսայգիներում և հանգստի վայրերում մարզադաշտերի/խաղադաշտերի, դաշտերի և սարքավորումների փակման վերաբերյալ, սույնով երկարաձգվում են մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:

A. Քաղաքի որոշ հաստատությունների փակում: Բոլորի առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու համար՝ ի պատասխան COVID-19- ի բռնկման՝ քաղաքապետարանի տնօրինության տակ գտնվող բոլոր զբոսայգիներում և հանգստի օբյեկտներում բոլոր մարզադաշտերը, խաղադաշտերը և սարքավորումները պետք է մնան փակ: Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը կարող է չեղյալ համարել կամ փոփոխել սույն հրամանի այս կետը, եթե այդպես վարվելը համահունչ է Լոս Անջելեսի շրջանի առողջապահության վարչության հրամաններին:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի:

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ

դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդել քաղաքի խորհրդի կողմից սույն թվականի մայիսի 12-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունված է՝

APPROVED AS TO FORM
PRINCIPAL ASSISTANT CITY ATTORNEY
DATE May 13, 2020

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ
ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-57 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի մայիսի 12-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան

Դեմ՝ Ոչ մեկը

Բացակա՝ Ոչ մեկը

Ձեռնպահ՝ Ոչ մեկը

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունվել է՝
05/12/20
Նաջարյան/Քասախյան
Դեմ՝ Բրոթման, Դիվայն

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-58

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ԱՋԱԿՑՎՈՒՄ Է ՎԱՐՁԱՎՃԱՐԻ և ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ 2020 Թ. ՕՐԻՆԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ (h.r. 6515)

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ քաղաքային խորհուրդը հրապարակել է մի շարք հանրային հրամաններ, որոնք սահմանել են մորատորիում՝ ըստ որի արգելվում է վտարել ցանկացած բնակելի և առևտրային տարածքի վարձակալողի, ով չի կարողանում վճարել վարձավճարը՝ COVID-19-ի հետ կապված

պատճառաբանությամբ; և

Հաշվի առնելով, որ «2020 թվականի վարձավճարի և հիփոթեքային վարկի չեղարկման մասին ակտը» (H.R. 6515) չեղյալ կհայտարարի բոլոր վարձավճարների և առաջնահերթ բնակության տների հիփոթեքային վճարները՝ ներկայիս ազգային արտակարգ դրության հայտարարության տևողության ընթացքում; և

Հաշվի առնելով, որ մորատորիումը հետադարձ ուժ կստանար, որպեսզի ներառվեին 2020 թվականի ապրիլ ամսվա վճարումները, և կշնորհվեր ամբողջական վճարման ներում՝ վարձակալների կամ տան սեփականատերերի համար վարձավճարի պարտքեր չկուտակելով, և օրինագծի համաձայն, դաշնային կառավարությունը կտրամադրեր օգնության միջոցներ տանտերերին և վարկատուներին՝ թույլ տալով նրանց վերականգնել իրենց կորուստները, եթե նրանք համաձայնում են պահպանել արդար վարձակալության և վարկավորման մի շարք գործելակերպեր՝ հինգ տարի ժամկետով; և

Հաշվի առնելով, որ դաշնային կառավարությունը կստեղծի կամընտիր գնման ֆոնդ՝ ոչ առևտրային, հանրային բնակարանային վարչությունների, կոոպերատիվների, համայնքային հողերի հիմնադրամների, նահանգների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մասնավոր վարձակալությամբ տրվող անշարժ գույքի գնումն ամբողջությամբ ֆինանսավորելու համար, և այս ֆոնդը նախատեսված է մեղմելու համար տնտեսական անկման հետևանքով առաջացած կենսունակ տների կորուստը, անշարժ գույքի շահարկումների ռիսկը մեղմելու և շուկայում մատչելի և ցածր եկամուտ ունեցող անձանց համար տների հասանելիությունն ավելացնելու համար; և

Հաշվի առնելով, որ վտանգի պայմանները շարունակում են գոյություն ունենալ, և անհրաժեշտ են դարձնում լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկումը՝ հանրային առողջության և անվտանգության պահպանման համար:

ՀԵՏԵՎԱԲԱՐ, ԱՅԺՄ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ Գլենդելի քաղաքապետարանը սատարում է «2020 թվականի վարձավճարի և հիփոթեքային վարկի չեղարկման մասին ակտը» (H.R. 6515) և ցանկացած այլ նման օրենք, որն օգնություն է տրամադրում Գլենդելի վարձակալներին և հիփոթեքային վարկառուներին: Աշխատակազմն իրավասու է, ըստ անհրաժեշտության, այլ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ օրենքին սատարելու համար:

Ընդունվել է Գլենդել քաղաքի խորհրդի կողմից սույն թվականի մայիսի 12-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Ընդունված է՝

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-58 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի մայիսի 12-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան

Դեմ՝ Բրոթման, Դիվայն

Բացակա՝ Ոչ մեկը

Ձեռնպահ՝ Ոչ մեկը

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

Քաղաքի դատախազ